ԱՂԷՏԱՔԷՐ

ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏՂԱՅՈՑ ԱՄԲԱՐ

“ԹՈՂ ՏՈՒԿՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՔԻ ԳԱՆ”. ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԵ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՄԱՐՏ 1, 1886 ԹԻԻ 3

BUTTS-NORTHROP CO.

ԻԹԸՆ ՔՈՂԷՁ

Կը դնենք այսօր Տղայոց Աւետարբերին մէջ առաջինը կարդ մը Անգղիական պատկերաց, անտարակոյս լինելով թէ հաճելի պիտի ըլլան թէ՛ չափահաս անձանց և թէ՛ տղայոց։ Այս է պատկեր հռչակաւոր քոլէճի մը յիթընի, քաղաք Թէմզ գետոյն վրայ հանդէպ Ուինսորի, ուր կը դանուի վիկթորիա թագուհւոյն դվռաւոր պալատը և է 21 մղոն վեր Լոնտոնէ։ Այս քոլէճը հիմնեց Հենրի Զ. Թագաւորն Անգղիոյ յամին 1441։ Նոր շէնքեր հետզհետէ յաւելուած են անոր վրայ

ԻԹԸՆ ՔՈՂԷՁ

յայնմհետէ, այնպէս որ քոլէճն ունի այժմ իբր 850 աշակերտ, որոց մեծագոյն մասը կը բնակին առանձին տուներ քաղաքին մէջ, և միայն դասառութեան ատեն կ'երթան քոլէճ։ Իթընի քոլէճի մէջ տղայք կ'ընդունին լաւ դաստիարակութիւն, բայց այնպիսիք որ կ'ուզեն աւելի յառաջ տանել իրենց ուսմունքը, կը մնանեն Օքսֆորտի կամ Քեմպրիճի համալսարանները, որոց իբրև նախապատրաստութիւնը կ'ընէ իթընի քոլէճը։

Բայց ի շատ ուրիշ հռչակաւոր անձերէ, Անգղիոյ կառավարութեան առաջին պաշտօնէից առ նուազն հինգը

դաստիարակուած են յիթընի քոլէճէ։ Բայց եթէ կը դանուի մեր ընթերցողաց մէջ այնպիսի տղայ մը որ վախճանի երթալ այսպիսի հին, անուանի և գեղեցիկ դիրք ունեցող դպրոց մը, պարտիմք յաւելուլ զայս ևս թէ իթընի քոլէճ մտնելու տարեկան միջին ծախքը մէկ աշակերտի համար՝ է 220 լիրա։ Կը յուսանք սակայն թէ այդ վախճանն ունեցող տղան կարող պիտի ըլլայ առնուլ բարւոք դաստիարակութիւն ուրիշ դպրոցաց մէջ ևս։

Տղաս, եթէ ունիս այսպիսի վախճան, մի թողուր զայն եթէ չես ստիպուած։

ՓՈՔՐԻԿ ՊԵՏՐՈՍԻ "ԵՍ ԵՄ" ՆԵՐԸ

Փոքրիկ Պետրոս սկսաւ երթալ դպրոց վեց տարեկան ըլլալէ առաջ։ Ամէնէն շատ կը սորվէր իւր դասերը որ դեռ հազիւ քանի մը շաբաթ անցած, վարժապետը ըսաւ անոր առաւօտ մը.

"Եկ հոս տղայ, և նայէ սա Աստուածաշունչին վրայ։ կարծեմ կրնաս կարդալ այս հատորը։ Կը թուի թէ քեզի համար դըժուած է։"

Պետրոս իւր բոլոր ջօրութեամբ ջանայ և կարդայ վարպանմամբ.

"Ես եմ կենաց հացը։"

Վարժապետն ըսաւ անոր թէ ասոնք Յիսուսի խօսքերն են, և թէ ինչպէս որ մենք պէտք ունինք հացի որպէս զի չմեռնինք անօթի և չմեռնինք սովէ, այնպէս և պէտք ունինք Քրիստոսի սիրոյն և չնորհաց որպէս զի պահուինք յաւիտեան չարչարուելէ և մեռնելէ։

Դպրոցին մէջ առաւօտեան պաշտամանն ժամանակ կարգացած գիրքն էր Յովհաննու Աւետարանը, և եթէ մեր փրկչին անոր նման մէկ խօսքը պատահէր, ընթերցումն ըլլալէն առքը, վարժապետը սովոր էր ըսել. "Ահա հոս կը գտնուի ուրիշ համարմը Պետրոսի համար." այնպէս որ աղան ոչ միայն կարգաց այլ նաև սորվեցաւ եօթն համարներ կամ համարներու մասեր Սուրբ Գիրքէն զորս միւս աշակերտք կը կոչէին Պետրոսի "Ես եմ" ները։

Չկա՞ն արդեօք ուրիշ փոքրիկ ազգ և աղջկունք ևս որ ուրախ ըլլան դիտնալով թէ որո՞նք էին այս "Ես եմ"ները որ ելան Յիսուսի շրթունքէն երբ նա կը գտնուէր երկրիս վրայ։ Ո՞վ կ'ուզէ սորվիլ և կրկնել զանոնք ամէն օր.

"Ես եմ կենաց հացը։"
"Ես եմ լոյս աշխարհի։"
"Ես եմ դուռն ոչխարաց։"
"Ես եմ բարի հովիւը։"
"Ես եմ յարութիւն եւ կեանք։"
"Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք։"
"Ես եմ ճշմարիտ որթը։"

ՕՔԹՈՓՈՒՍ

ՕՔԹՈՓՈՒՍ

Նայէ այս պատկերին վրայ և ըսէ ինձ թէ տեսա՞ծ ես երբէք քան զայն աւելի ապեղ կենդանի ծովու կամ ցամաքի վրայ։ Այս կենդանին կը կոչուի օքթոփուս, կամ ութոտնեայ, վասն զի ունի ութ երկայն սրունք մարմնոյն վրայ, և է աշխարհիս վրայ մեծագոյն կենդանին իւր տեսակին մէջ։ Թուղը կենդանեայ չատը, թէ՛ ըլլան անոնք չորքոտանի, թէ՛ թռչուն և թէ՛ ձուկն, անոնց քամակի ոսկրը կամ ոզնայարը, նաև ուրիշ ոսկրներ անկէ շատ իղեալ, և կը կոչուին ոզնայարատար։ Բայց օքթոփուս չունի ոսկր, և սակայն երբեմն շատ կը մեծնայ։ Ամերիկեան Հնդկաստանի կղզիներէն մէկուն միոյն եղերքը դտնուեցաւ մեռեալ օքթոփուս մը որոյ մարմնոյն երկայնութիւնն էր 10 ոտք և սրունկից իւրաքանչիւրինը՝ աւելի քան 3 ոտք, և անոր ծանրութիւնը՝ իբր 90 քաշ։ Գիտնաք կը կարծեն թէ ծովուն խոր տեղերը մինչև իսկ քան զայս շատ աւելի խոշորներ կը գտնուին։ Օքթոփուսին սրունկից իւրաքանչիւր սրունկից վրայ երկու կարգ մանր բոլորաձև ծծիչ-

ներ, և անոնցմով կը բռնէ իւր որսը, կամ կը փակչի ուր որ ուզէ կենալ։ Անոնց մէջէն կը պարպէ օդը և ջուրը, որով կը փակչի որևիցէ առարկայի վրայ, ճիշդ ինչպէս որ չիշ մը կը փակչի աղու մը լեզուին երբ կը հանէ անկէ օդը։ Պատկերին մէջ կը տեսնուի որ օքթոփուսը բռնած է խեցգետին մը որ ի զուր կ'աշխատի պրծիլ անոր ձեռքէն։ Երբեմն մարդիկ բռնուած են օքթոփուսներէ, և գժուարաւ կարող եղած են ազատիլ ղիրենք։ Անդղեացի մը որ այցելեց Պորնէոյ կղզին, բըռնեաւ օքթոփուսէ մը, և չկարաց պրծիլ անոր ձեռքէն մինչև որ անոր ընկերք հասան և կարեցին օքթոփուսին սրունքը։ Սուզակ մի ևս կը պատմէ թէ ունեցած էր սոսկալի կռիւ օքթոփուսի մը հետ, որուն ձեռքէն պրծաւ 15 վայրկեան մաքառելէ ետքը միայն, և մինչև իսկ անատեն թէպէտ կտոր կտոր ըրած էր օքթոփուսը, փակած էր իւր մարմնոյն անոր մէկ մասը, զոր հանեց իւր հետ ջրէն դուրս։ Կան տեղեր ուր կ'ուտեն օքթոփուսը, և կ'ըսուի թէ կը վաճառուի այն ձմիւռնիոյ չուկային մէջ։ Կ'ուտեն ղայն նաև կէտ ձուկերը և ուրիշ խոշոր ձկունք։ Որպէս զի ազատուի ասոնց ձեռքէն, կ'արձակէ իւր մարմնէն սևագոյն հեղուկ մը որ կը ներկէ ջուրերը և կը ծածկէ զինա աչաց տեսութենէ։

ԴԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑԻ ՆՆՋԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Թերևս մեր փոքրիկ ընթերցողներէն սակաւք երբեք պիտի երթան դիշերօթիկ դպրոց, բայց պիտի դըտնուին այնպիսի պարագայից մէջ որ ուղիղ գործ մը ընելով նշանակ պիտի ընեն զիրենք այլոց ծաղուն և թերևս ընդդիմութեան։ Սակայն կը յուսանք թէ անոնք միշտ պիտի ունենան քաջութիւն ինչպէս ցուցուց փոքրիկ Ա.րթուր հետագայ պատմութեան մէջ.

Կարդ մը նոր աշակերտներ գրեթէ ամէնքն ալ կանգնած էին սեղանոյ մը առջև, ամէն տեսակէ և հասակէ, Թովմաս կը նայէր անոնց վրայ և ամբչկոտ փոքրիկ Ա.րթուր էր անոնց մէջ. Թովմաս առաւ զԱ.րթուր աղօթքէն ետքը և տանելով զնա ուղղակի վերի յարկը ցուցուց անոր իւր անկողինը։ Ընդարձակ, բարձր և օդաւէտ սրահ էր այն։ Հոն կը գտնուէին տասներկու անկողիններ։

Ա.րթուր ապշեցաւ տեսնելով իւր նոր տեղը։ Հազիւ կը համարձակեր հանել իւր վերարկուն։ Եւ սակայն հանեց ղայն և յետոյ կեցաւ և տեսաւ որ Թովմաս նստած իւր անկողնոյն քով կը խօսէր և կը խնդար։ Ա.րթուր հանեց իւր բոլոր հանդերձները և հագաւ դիշերանոցը։ Յետոյ նայեցաւ իւր չորս կողմը աւելի կասկածանօք։ Երկու երեք փոքր աղայք արդէն մտած էին անկողին, և սակայն նստելով կծկած դիրքով։ Լոյսը կը վառէր պայծառ, և աղայք կը շարունակէին ձայն հանել և խօսել։ Ա.յս էր փորձութեան վայրկեան փոքրիկ Ա.րթուրին համար, բայց չզգուշելով միւս աղայոց ըրածները, ծնկան վրայ եկաւ իւր անկողնոյն քով, ինչպէս ըրած էր ամէն օր մանկութենէն հետէ, բանալ իւր սիրտն այն Էակին որ կը լսէ թէ՛ փսփսուկ և տակաւ աղայոց և թէ՛ հուժկու և տառապեալ մարդոց աղաղակը և կը կրէ անոնց ցաւերը։

Թովմաս նստած իւր անկողնոյն քով իւր կօշկայ կոճակները կը քակէր կռնակն Ա.րթուրի կողմը դարձուցած, և վեր նայեցաւ վասն զի յանկարծ լռութիւն տիրեց։ Ա.յնուհետև երկու երեք աղայք սկսան խնդալ Ա.րթուրի վրայ և ծաղր ընել զնա, և մեծ բայց անմիտ աղայ մը որ կանգնած էր ննջարանի սրահին մէջտեղը, առաջ մղճաւակ մը և նետեց Ա.րթուրի վրայ որ դէռ ծնկան վրայ կեցած էր, կոչեղ զնա լալկան աղայ։ Թովմաս կը տեսնէր ասոնք ամէնը, և իւր կօշիկը զոր ոտքէն կը հանէր խկոյն նետեց չիտակ վերցնելով ղային գլխոյն, որ սակայն չթողուց իւր գլխոյն դպչել արմուկը անոր դէմ բերելով։

«Թելդ կորսուի՞ր, ի՞նչու ըրիր,» աղաղակեց նա բարձր ձայնով, ցաւէն իւր ոտքերը գետին զարնելով միանգամայն։

«Ես դիտեմ թէ ինչու համար ըրի,» ըսաւ Թովմաս, ոտք ելլելով և յուզեալ յայժ, «երթէ ուրիշ աղայ մի ևս ընէ այդպիսի բան, այն ևս պիտի ընդունի միւս կօշիկս։»

Ուրիշ շատ աղայք ևս որ այն սրահին մէջ կը գտնուէին շատ աղդուեցան այս տեսարանէն։ Բայց յետոյ մինչ անոնք ի քուն մտած էին, կը թուէր թէ վախած էր ողորմելի Թովմասին քունը։ Անոր միտքն եկաւ իւր մայրը և խոստումը զոր ըրած էր իւր մօր ծնգաց վրայ շատ տարի առաջ բնաւ չմոռնալ ի ծունր իջնել անկողնոյն քով և աղօթել։

Ողորմելի՛ Թովմաս, առաջին և դառնագոյն դպացումը որ կը թուէր թէ կը մրմնջէր անոր սիրտը՝ էր ամչկոտութեան վատութիւնը։ Սուտ խօսած էր իւր մօրը, իւր խղճին և իւր Աստուծոյն, և ի՞նչպէս կրնար հանդուրժել այս բաներուն։

Որոշեց նստիլ գրել յաջորդ օրն իրենց տան, և խոստովանիլ իւր մօր ամէն բան մի ըստ միոջէ, և թէ ի՛նչպէս երկչոտութիւն ցուցած էր մինչև անատեն։ Երբ ըրաւ այս որոշումը, և որպէս զի յաջորդ առաւօտ ընէ իւր աղօթքը, խաղաղութիւն զդաց իւր ներսիդին։ Բայց անոր վրայ յարձակեցաւ սա փոքրիկ փորձութիւնը, որ անոր խորհել առաւ այսպէս. «Ո՞չ ապաքէն այսպէս ընելով ես աւելի համարձակ ցուցած պիտի ըլլամ զիս քան միւս աղաքը, ունի՞մ իրաւունք սկսել զայն հիմա։» Բայց անոր բարի հրեշտակն աւելի զօրաւոր եղաւ այն գիշերը։

Յաջորդ առաւօտուն եկաւ Թովմաս, լուացուեցաւ և հագուեցաւ, բայց տակաւին իւր բաճկոնը և վերարկուն չհագած սկսաւ գալ առաջին զանգակին ձայնը։ Անատեն բոլոր իւր ննջարանի ընկերաց առջև ի ծունր իջաւ աղօթել։ Սակայն կարող չեղաւ հանել բերնէն հինգ բառ խօսք։ Ի վերջոյ աւելի մեղմ ձայն մը կը թուէր թէ կը շշնչէր մաքսաւորին խօսքերը. «Աստուած ողորմ ինձ մեղաւորիս։» Եկաւ աղօթքէն ետքը, մխիթարուած, խոնարհած, և պատրաստուած դիմագրաւել բոլոր աշխարհն։ Բայց չեղաւ հարկ ասոր։ Երկու ուրիշ աղայք արդէն հեռացած էին անոր օրինակին, և իջած վար դպրոցին մեծ սրահը սա դասը սորված ըլլալով թէ Ով որ կը յաղթէ բուն իսկ իւր երկչոտ հոգւոյն, կը յաղթէ նաև համայն աշխարհի։

ՋՐԱՆՑՔ Ի ՀՈԼԱՆՏԱ

Ա.յս պատկերին տեսարանն է Հոլանտա, որ կը կոչուի նաև Նեթերլանտա, այսինքն Ստորին նահանգ, վասն զի այս երկրին մակերեսը շատ ցած է, և է տափարակ։ Անոր դաշտերէն ոմանք ստուգիւ են աւելի ցած քան գետնական Ովկիանոսը որ կը թանայ անոր սահմանագլուխները, և կը պաշտպանուին ողողուելէ բնական աւազոյ թումբերով և ձեռակերտ հողաթումբներով։ Ա.յս երկրին ցած ըլլալն արդեանց մին այս է որ անոր այլևայլ կողմերը ջրանցք կը ծառայեն փողոցներու տեղ, և ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, նպարավաճառը կը դրկէ իւր ապրանքը խոհարարին դուռը՝ նաւակով ջրանցին վրայէն։ Նաւակ պահել աւելի դիւրագին է քան ձի պահելը, և ջրանցքի վրայ նաւակօք ճամբորդութիւնը

աղատ կ'ընէ նեղուելէ հիւանդները և կամ ջղային խառնուած ունեցող անձերը, որոց կարի անախորժ է լսել շարունակ կառաց ճռնչիւնը երբ կ'անցնին սոսնձ սալայատակ փողոցներէն։ Եւ ձմեռը երբ ջրանցները սառած են, Հոլանտացիք կը սահին անոնց վրայէն կարի արագ՝ երկաթ մուճակներով, և ինչպէս արք նոյնպէս և կանայք շատ վարժ են սոսնձ գործածելու։ Հոլանտացի պատանիք ղբօսանքէ թափուր կը հատարին այնպիսի ձմեռ մը յորում չեն կրնար գործածել իրենց երկաթ մուճակները։ Ջրանցք ի Հոլանտա լի են կանաչ ջրային խոտերով, վասն զի ջրանցից ջուրերը շատ քիչ շարժում ունին, և սակայն չերևիր հոն շատ ջերմ ոչ ոչ ընդհանրապէս պատճառ են լճայեալ կամ անշարժ ջուրերը։

Այս ջրանցք քան զպարիսպս լաւագոյն ծառայութիւն ըրին Հոլանտացւոց կրօնական և քաղաքական պատուութեան երկարատև պատերազմաց մէջ ընդդէմ Սպանիոյ ասկէ երեք դար առաջ։ Կրկին և կրկին ճեղքուեցան թումբերը, և ջուրերն եղան իրրև պատնէշ Սպանիացի զինուորաց դէմ։ Լէյտընի պաշարման ժամանակ, 1,000 Սպանիացիք որ պաշարած էին զայն, խեղդուեցան թմբոց ճեղքուելուն պատճառաւ ներս յորդող ջրոց մէջ։ Հոլանտայի այս դիրքը զարգացուցած է այն երկրին առևտրական և ծովային զօրութիւնը։ Եղաւ ժամանակ որ Հոլանտայի նաւատորմիղն էր հզօրագոյն յաշխարհի, և անոր ծովակալք վ'ն Թրոմբ և Տը Բայթէր կը համարուին ծովային գիւցազանց մեծագոյններուն կարգէն։ Թէպէտ Հոլանտա է փոքր երկիր 12,600 քառակուսի մղոն տարածութեամբ և նուազ առաւել քան 4,000,000 բնակչօք, կը տիրէ, սակայն, կղզեաց վրայ որ ունին տարածութիւն աւելի քան 600,000 քառակուսի մղոն, և կը պարունակեն իրր 25,000,000 բնակիչ։

ՋՐԱՆՑՔ Ի ՀՈԼԱՆՏԱ

ԿԱՑՍԵՐ ԺԱՄԱՑՈՑՑԸ

Աշխարհիս մէջ նշանաւորագոյն անձը որ կը չինէ պողպատ և թինդանօթ, է Գերմանացի մը Հէր Քրուփ անուն։ Ունի ընդարձակ գործարաններ Էսսէն քաղաքին մէջ և կ'աշխատցունէ հազարաւոր գործաւորներ։ Անոնցմէ մին շատ նշանաւոր է հանճարով, և անոր հանճարոյն մի օրինակը տրուած է Ընկէր Եւէրսոպրդայ հանդիսին մէջ։

Ասկէ քիչ ժամանակ առաջ Վ. Իշհելմ կայսր Գերմանիոյ այցելեց անոր մեծ գործարաններուն։

Գործարանին մի մասին մէջ կար մեծագին և շքեղ զօրութեամբ գործածելի մուրճ մը աւելի քան 40,000 քաշ ծանրութեամբ, և այդ առթիւ յարքունուստ տրուեցաւ անոր անուն "Ընոքը Ֆրից," գահաժառանգին ընծայեալ տիտղոսէն։

Աշխատապետը որ կը գործածէ այս մուրճը, է յոյժ հանճարեղ և կարի աշխատասէր, և այնպիսի անձ որով կը պարծի հռչակաւոր թինդանօթագործը, Հէր Քրուփ, նաև է հայր ութ զուարթ և կայտառ ուստերաց և դստերաց։

Հէր Քրուփ ներկայացուց կայսեր այս հանճարեղ և հաւատարիմ գործաւորը, սա խօսքերով. "Սա է Ֆրից և նորա վիթխարի մեքենան, և նա այնպէս լաւ կրնայ գործածել զայն որ վար իջեցունէ մուրճը բոլոր անոր ուժովը և յեսոյ իսկոյն կրնայ կեցուցանել զայն՝ մատնաչափին տանելիքով մոմին չափ բարձր մնալով սալէն։"

Կայսրն առանց բառ մը արտասանելու հանեց իւր աղամանդակուռ ժամացոյցը և անմիջապէս դրաւ զայն սալին կեդրոնը, և քաղցր ժպիտով մը հրամայեց յիշեալ գործաւորին որ անոր վրայ իջեցունէ մուրճը և բռնէ զայն ժամացուցին գալէն առաջ։

Կայսեր հետ դանուողներէն ոմանք որ կը կանդնէին հոն, կ'երևէին ապշած, և այլոց երեսին վրայ կը նշմարուէր մեծ տարակուսանաց նշանները։

Գործաւորը վարանեցաւ կատարել կայսեր հրամանը, բայց Հէր Քրուփ սպասեց զնա ընել ինչ որ հրամայուեցաւ անոր, և հուսկ ուրեմն իւր վարպետին խօսքով նա ձեռք զարկաւ կատարել հրամանը։

Իջաւ ահագին գործին ահռելի ուժգնութեամբ, և մարդն արգելեց զայն իրրև փետուր մը, այնչափ միայն հեռի թողլով ժամացոյցն որ անոր և սալին մէջտեղ չէր կրնար մտնել մինչև իսկ մանկիկի մը ձեռքը։

"Կեցցէ՛", աղաղակեց ինքնակալն ուրախացմամբ։

Կայսեր պալատականներէն անոնք որ մօտագոյն կը գտնուէին, երկար շունչ մը առին, և Հէր Քրուփ մեծ հաճոյք զգաց։

Ցետոյ վարպետը ծառեցաւ վար որպէս զի առնուր ժամացոյցը սալին վրայէն, բայց կայսրն արգելեց անոր ձեռքն ըսելով, "ժամացոյցը անորն է, նա չահեցաւ զայն։" Ուրախութեան ձայն արձակելով ծափահարեցին բոլոր գործաւորք որ շուրջ կը գտնուէին, և հուսկ ուրեմն տարածուեցաւ այն ձայնը չէնքին ամէն կողմը։

Հէր Քրուփ հանեց իւր քսակը և յաւելցուց կայսեր նուէրին վրայ իբր 30 ոսկիի գումար մը և տուաւ շաքադունեալ գործաւորին, միանգամայն ըսելով անոր չընչմարիք, "կը նուիրեմ սոսնձ ժպգնեալ կնոջդ, փոքրիկ զաւակացդ և բարի ծերունի մօրդ։" Ծափահարութիւն մի ևս հնչեց ամբողջ չէնքին մէջ, և նոյն ինքն կայսրն ևս ծափահարեց։

Ամերիկայի Միսիոնարաց ընկերութեան կողմէն,
Խմբագիր Ձ. Ֆ. ԿՐԻՆ։
Փոխ–խմբագիր Հ. Ա. ՊԱՐՆԵՄ
Ցինանանդլար հօգուտ Ազգերու Խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅՃԱՃԵԱՆ